Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● Էլ.հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Բառապաշարի յուրացման համար արդյունավետ ինտերակտիվ մեթոդները տասներորդ և տասներկուերորդ դասարաններում:
Ուսուցչի տվյալներ ● Ա.Ա.Հ. ● Մասնագիտություն ● Հեռախոս ● Էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Մարգարյան Սոնա Մեսրոպի Ուսուցիչ անգլերեն 10, 12
Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● Էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	Գ. Էմինի անվան համար 182 ավագ դպրոց հիմնադրամ Կորի 55 School182@schools.am

Բովանդակություն

1. Ներածություն……
2. Բառապաշարի յուրացման ինտերակտիվ մեթոդները…….
3. Բառապաշարի յուրացման իմ մշակած մեթոդները…….....
4. Բառապաշարի յուրացմանն օգնող ամենատարածված առցանց ուսուցման գործիքները……,,……..
5. Կատարված դասերի նկարագրություն……
6. Եզրակացություն……
7. Գրականության ցանկ……..

Ներածություն

Յուրաքանչյուր դասավանդող իր աշխատանքային գործունեության մեջ, հատկապես դասավանդման ընթացքում առնչվում է տարբեր խնդիրների հետ: Իմ դասավանդման ընթացքում 2010թ.սկսած հանդիպել եմ տարբեր խնդիրների: Սույն աշխատության մեջ կանդրադառնամ ինձ ամենաշատը հուզող խնդրին:

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ներկայումս աշակերտության գերիշխող մեծամասնությունը խնդիր ունի օտար լեզվի բառերը սովորելու, հիշելու և վերարտադրելու հետ: Դրա հետ կապված բարդություններ են առաջանում լեզվի ֆերականությունը և հնչյունաբանությունը ուսուցանելիս: Ստացվում է, որ առանց լեզվի նվազագույն միավորի՝ բառի, հնարավոր չէ իրագործել լեզվի ուսումնասիրություն: Իհարկե, դա ինչ-որ չափով կապված է նրանց հիշողության, կենտրոնացման բացակայության, ինչու չէ ծուլության և ներկայիս գաջեթների չափից շատ օգտագործման խնդրի հետ: Այնուամենայնիվ, մեր խնդիրն է գտնել արդյունավետ և հետաքրքիր ձևեր խնդրին լուծում տալու համար: Աշխատության մեջ ներառված են այն մեթոդները, որոնք ես կիրառել եմ իմ դասավանդման ընթացքում: Դրանց թվում են ինչպես հանրահանաչ, այնպես էլ իմ մշակած մեթոդները: Ինտերակտիվ ո՞ր մեթոդներն են առավել արդյունավետ տասներորդ և տասներկուերորդ դասարաններում անգլերենի բառապաշարի յուրացման համար:
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Թեման իսկապես ինձ հուզում է, քանի որ ներկայիս աշակերտությունը դժվարություն ունի լեզվի նվազագույն միավորի՝բառի, սովորելու, յուրացնելու, հիշելու, օգտագործելու հետ: Իսկ առանց բառի յուրացման, թերևս, չի կարող լինել օտար լեզվի ո՛չ բառապաշարային, ո՛չ ֆերականական, և ո՛չ էլ հնչյունաբանական ուսումնասիրություն:

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Նպատակի ուսումնասիրությունն ուղղված է լեզվական գրագիտություն և կարողունակություն կոմպետենցիայի զարգացմանը:
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Այս ոլորտին մենք անդրադարձել ենք վերապատրաստման հենց առաջին իսկ օրը, երբ կազմված խմբերի միջոցով ուսումնասիրում և ներկայացնում էինք կարողունակություններ թեման:

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Բառապաշարի յուրացման ինտերակտիվ մեթոդներ Ուսուցման փոխներգործուն գործընթացը կազմակերպելու համար ստեղծված ինտերակտիվ մեթոդները շատ են: Ուզում եմ ներկայացնել այն մեթոդները, որոնք հասցրել եմ օգտագործել կարճ ժամանակում՝ հետազոտություն կատարելու նպատակով: Նույն մեթոդները կիրառվել են տասներորդ և տասներկուերորդ դասարաններում Fun and Games, Travel and Transport դասերն ուսումնասիրելիս: Մտագրոհ կամ մտքերի տարափ **(Brainstorming)** Մտագրոհը կամ մտքերի տարափը խմբային աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է: Այն նպատակահարմար է կիրառել ցանկացած դասի խթանման փուլում:

Մեթեդը կոչվում է «Մտքերի տարափ», քանի որ խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող հյութին այս կամ այն կերպ առնչվող բառեր, արտահայտություններ թվարկելն ու սահմանումներ արտահայտելը: Խմբի անդամների առջև խնդիր է դրվում արտահայտել սեփական տեսակետը՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատականի: Տվյալ դեպքում բոլոր բառերն ու արտահայտություններն ընդունելի են, «սխալ» չկա: Մտքերի, բառերի, արտահայտությունների և սահմանումների ազատ հոսք կարող է լինել միայն այն ժամանակ, երբ բացակայում է քննադատության վտանգը: Հետևաբար մեթոդի կիրառման ժամանակ ցանկացած քննադատություն բացակայում է: Գաղափարները խրախուսվում են, և ամբողջը գրի առնվում գրատախտակին: Որպես անգլերենի ուսուցիչ՝ այս մեթոդը կիրառում եմ ոչ միայն նոր դասի մատուցման, այլ նաև արդեն սովորած դասի կրկնության, ամրապնդման և ստուգման նպատակով: Ուզում եմ ճշել նաև, որ հոմանիշների հետ կապված աշխատանքը շատ հաջող է ստացվում այս մեթոդի կիրառմամբ:

Խմբավորում

(Grouping)

Այս մեթոդը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել աշակերտների իմացության, ընկալումների և պատկերացումների մասին: Աշակերտները կապեր եմ փնտրում և գտնում իրենց ունեցած գիտելիքների միջև:

Գրատախտակին գրվում է թեմայի հետ առնչվող որևէ առանցքային բառ: Այնուհետև մտագրոհի միջոցով գրվում են այդ բառին առնչվող բառեր և արտահայտություններ: Ավարտելուց հետո գծիկներով միացվում են այն բառերը, որոնք իրար հետ առնչվում են: Օրինակ՝ Fun and Games թեմայի բառերից իրար հետ կարող եմ միանալ club-organization, team-group,

coach-referee, classical music-folk music բառերը: Մեթոդը շատ պարզ է, մատչելի և արդյունավետ: Աշակերտները անմիջապես հմտանում են և հեշտությամբ կարողանում են կատարել թե՛ փոքր խմբերով, թե՛ անհատական:

T-ձև աղյուսակ

(T-chart)

T-ձև աղյուսակը օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի, բառի կամ արտահայտության երկու կողմերը համեմատելու համար: Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի, արտահայտության կամ բառի որակները, դրական կամ բացասական կողմերը: Յուրաքանչյուր մեթոդ, այդ թվում և T-ձև աղյուսակը հարմարեցվում է տվյալ առարկային և դասին: Իմ կողմից այն մեծապես օգտագործվում է որպես նոր բառի հոմանիշների և հականիշների գրանցման աղյուսակ: Վերևի հատվածում գրվում է նոր բառը, ձախ կողմում թվարկվում են հոմանիշները, իսկ աջում՝ հականիշները:

Քառաբաժան

(Quaters)

Դասանյութի յուրացումը ստուգելու նպատակով օգտագործում ենք քառաբաժան մեթոդը՝ տետրի էջը խաչաձև բաժանելով չորս հավասար մասերի: Առաջին մասում գրում ենք տվյալ արմատից բաղկացած գոյականները, երկրորդում՝ ածականները, երրորդում՝ բայերը, իսկ չորրորդ մասում կազմում ենք բառակապակցություններ և նախադասություններ:

Բառապաշարի յուրացման իմ մշակած մեթոդները

Իրավիվիճակ
(Situation)

Այս մեթոդը բավականին շատ եմ օգտագործում կշռադատման փուլում: Մեթոդի կիրառման համար հիմնականում տրվում է տասնհինգ բոպե: Իրավիճակն իրենից ներկայացնում է ցանկացած գրվածք: Կարող է լինել դա մենախոսություն, երկխոսություն, դրամա, պատմվածք, հեքիաթ, առակ, բանաստեղծություն կամ որևէ այլ բան: Օգտագործվում է նախորդ կամ տվյալ դասին անցած բառապաշարը: Առաջին փորձերի ժամանակ աշակերտները տրտնջում են և բողոքում, բայց մի քանի անգամ կիրառելուց հետո մեթոդը դառնում է ընդունելի և սովորական: Մեթոդը հիմնականում զարգացնում է ստեղծագործական միտքը, աշակերտները հաղթահարում են սեփական մտքերը շարադրելու, սխալներ թույլ տալու, ուղղելու ու դասարանին ներկայացնելու վախը: Մեթոդի շնորհիվ զարգանում է ոչ միայն գրավոր, այլ նաև բանավոր խոսքը:

Թարգմանություն
(Translation)

Այս մեթոդի ժամանակ ուսուցիչը գտնվում է դիտորդի դերում: Կազմվում են երկու աշակերտից բաղկացած խմբեր: Ցուրաքանչյուր խումբ ինքն է որոշում, թե որ խմբին է ուզում հարցնել տվյալ դասի համար տանը արդեն իսկ սովորած բառապաշարը: Իհարկե, տրվում

է երեք բոպե կրկնելու համար: Խումբը բառերը հարցնելիս որոշում է նաև, թե ով պետք է մյուս խմբից թարգմանի բառերը: Եթե երեք վայրկյանում չի հնչում պատասխանը, ապա խմբի մյուս մասնակիցը պետք է պատասխանի: Այսպես շարունակաբար աշակերտները իրար հարցնում են բառերի թարգմանությունները հայերենից անգլերեն և հակառակը: Հաղթում է այն խումբը, ով ամենաշատ անսխալ պատասխաններն է տալիս:

Զամբյուղ

(Basket)

Զամբյուղի մեջ դրվում են առանձին թղթերի վրա գրված հայերեն և անգլերեն բառեր և արտահայտություններ: Կազմվում են երկու հոգանոց խմբեր: Խմբերը հերթով մոտենում են զամբյուղին, հանում են թղթերը և թարգմանում բառերը կամ արտահայտությունները: Յուրաքանչյուր խմբին տրվում է երեք բոպե: Հաղթում է այն խումբը, ով ավելի շատ բառեր է թարգմանում: Նույն մեթոդը կիրառվում է նաև առանձին աշակերտների դեպքում: Մեթոդի կիրառման ժամանակ ընտրում ենք բարտուղար, ով պատասխանատու է ճիշտ հնչած պատասխանները հաշվելու համար:

Բառապաշարի յուրացմանն օգնող ամենատարածված առցանց ուսուցման գործիքներ

Padlet

Padlet-ը ամենատարածված առցանց ուսուցման գործիքներից մեկն է: Այն իրենից ներկայացնում է պատ կամ վիրտուալ բարտ, որտեղ մենք ստեղծում ենք, այսպես ասած, հայտարարությունների տախտակներ, կարողանում ենք տեղադրել ցանկացած տիպի ֆայլ կամ հղում:

Padlet-ի օգնությամբ կարող ենք ստեղծել նաև համատեղ տախտակներ և համատեղ դպրոցական նախագծեր: Այսինքն աշակերտները նույնպես կարող են ներգրավվել Padlet պատի ստեղծման գործընթացի մեջ: Padlet գործիքի շնորհիվ կարողանում ենք տեղում սովորել բառերը կամ ամրապնդել արդեն սովորածը:

Kahoot!

Kahoot!-ը խաղի վրա հիմնված ուսումնական գործիք է: Այն կարելի է օգտագործել աշակերտի գիտելիքների վերանայման համար և որպես առույգացնող վարժանք: Խաղը բավականին պարզ է՝ աշակերտները միանում են խաղին հեռախոսների միջոցով՝ օգտագործելով խաղի կողմից առաջարկած PIN կոդը, որը ցույց է տրված ընդհանուր էկրանի վրա, և սկսում պատասխանել ուսուցչի կողմից առաջադրված հարցերին: Ցուրաքանչյուր հարցից հետո միավորները հայտնվում են առաջատարների տախտակին: Kahoot!-ի օգնությամբ անմիջապես կարելի է բացահայտել, թե ով ինչքանով է պատրաստ դասին:

Կատարած դասերի նկարագրություն

Ուսուցչի կողմից դասավանդման մեթոդների ընտրությունը արդյունավետ մանկավարժական գործունեության խնդրի կարևորագույն կողմերից է: Այս հարցի բարդությունը կայանում է

չափազանց մեծ թվով գործոններով դասավանդման մեթոդի ընտրության պայմանականության մեջ: Յու.Կ. Բաբանսկին առաջարկում է դասավանդման մեթոդ ընտրելիս հաշվի առնել վեց հիմնական պարամետր, որոնք ներառում են գործոնների ողջ բազմազանությունը՝ դասավանդման օրինաչափություններ և սկզբունքներ, վերապատրաստման նպատակներն ու խնդիրները, առարկայի բովանդակությունը, սովորելու հնարավորություններ աշակերտների համար, արտաքին պայմանների առանձնահատկությունները, հնարավորությունները հենց ուսուցիչների համար:

Դասավանդման մեթոդները ուսուցչի և աշակերտների համատեղ գործունեության եղանակներ են, որոնք ուղղված են ուսումնական նպատակներին: Մեթոդների ընտրությունը կախված է առարկայի բնութագրից, նպատակներից և խնդիրներից, աշակերտների անհատական բնութագրերից, կրթության մակարդակից, ուսումնական հաստատության նյութատեխնիկական հագեցվածությունից:

Դասի ուսուցման ձևի ընտրությունը հիմնականում կախված է դասի նպատակից և աշակերտների հնարավորություններից:Կրթության ձևերը անընդհատ կատարելագործվում են, հայտնվում են դրանց նոր տեսակները:

Դասի անցկացման արդյունավետության ամենակարևոր պայմանը ուսուցման մեթոդների գրագետ օգտագործումն է:

Վերը նշված մեթոդների կիրառման ձևերից կարելի է հասկանալ, որ յուրաքանչյուր մեթոդ իր կառուցվածքով և խմաստաարտահայտչական ձևերով հարմարեցրել եմ մեր դասի բնույթին և թեմային: Սրանք մոտավորապես այն ինը մեթոդներն ու առցանց ուսուցման գործիքներն են,, որոնք կիրառել եմ երկու շաբաթվա ընթացքում տասներորդ և տասներկուերորդ դասարաններում: Պետք է նշել որ երկուսն էլ հումանիտար հոսքի

լեզվագիտական ենթահոսքի դասարաններ են: Սակայն երկու դասարանները իրարից խիստ տարբերվում են և՛ իրենց ընդունակություններով, և՛ կարգապահությամբ, և՛ պատասխանատվությամբ, և՛ ուսման նկատմամբ իրենց ունեցած հետաքրքրությամբ, և՛ գիտելիքներով, և՛ դասարանի սովորողների քանակով: Այսինքն, իմ դասավանդած դասարաններից ընտրել եմ երկու ամենատարբեր, հակադիր բևեռներով դասարանները: Յուրաքանչյուր դասին (Fun and Games, Travel and Transport) հատկացվել է երեք դասաժամ: Մեթոդների կիրառումից հետո աշակերտներին տրվել են հարցաթերթիկներ, որոնցով նրանք 1-10 բալային սանդղակով գնահատել են ամենահետաքրքիր և ամենաարդյունավետ մեթոդները:

Շատ հաճելի, արդյունավետ և հետաքրքիր դասեր ստացվեցին տասներկուերորդ դասարանում: Անգամ գրատախտակին պատկերված մեթոդական սխեմաները սպասվածից ավելի հարուստ տեսք ստացան և հագեցան շատ ավելի նոր բառերով, քան որ նախատեսել էի: Մեթոդները հետաքրքիր էին իրենց համար, դասն անցավ աշխույժ և հետաքրքիր աշխատանքային մթնոլորտում: Որոշներն էլ սովորական էին իրենց համար, քանի որ երկու տարի շարունակ կիրառել եմ իրենց դասարանում:

Պատկերը շատ տարբեր էր տասներորդ դասարանում: Տասներկուերորդ դասարանի գունագեղ դասերի ֆոնին այստեղ դասերը բավականին պասսիվ էին, չնայած որ հաջողվեց մի փոքր շարժել նաև այս դասարանի աշակերտների հետաքրքրությունը: Մեթոդներն իրենց համար նորություն էին, ինչը որ արդեն իսկ լավ էր: Այս դասարանում ավելի շատ թվով աշակերտներ են սովորում, ինչը և բնականաբար բարդացրեց մեթոդների կիրառման գործը: Եթե տասներկուերորդ դասարանում սովորում է տասնյոթ աշակերտ, ապա այստեղ՝ տասներորդ դասարանում, սովորում է քսաներեք աշակերտ: Քանի որ այս դասարանի աշակերտների գիտելիքների

	մակարդակը բավականին ցածր է, նրանք շատ դժվարությամբ էին աշխատում բառապաշարի յուրացման մեթոդներով: Գրեթե բացակայում էր ինքնուրույնությունը: Իհարկե, այս պարագայում ևս կարողացանք կողմնորոշվել և, իմ ցուցումով, նրանք սկսեցին աշխատել բառարանով: Ասեմ, որ պարտադիր պայման է հեռախոսների մեջ ունենալ ներբեռնված անգլերենի բացատրական, հոմանիշների և հականիշների բառարան: Դասարանը սովորեց բառարաններից օգտվել և լրացնել աղյուսակներ: Ամենամեծ հետաքրքրությունն ու ակտիվությունը երկու դասարաններում էլ առաջացավ առցանց ուսուցման գործիքների՝ Padlet-ի և Kahoot!-ի կիրառման ժամանակ: Սրանք միակ գործիքներն էին, որ երկու դասարաններում էլ անխտիր բոլորին հետաքրքրեցին:
Օգտագործված մեթոդները, գործիքները	
Իրականացման ժամանակահատվածը	09.09.2022թ.-20.09.2022թ.

Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	10^2 դասարան՝ լեզվագիտական ենթահոսք, 23 աշակերտ՝ 9 տղա, 14 աղջիկ: 12^2 դասարան՝ լեզվագիտական ենթահոսք, 17 աշակերտ՝ 4 տղա, 13 աղջիկ:

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Եզրակացություն Երկու շաբաթվա փոքրիկ հետազոտությունը թույլ տվեց գալ հետևյալ եզրահանգման՝ ❖ մեթոդի ընտրությունը խստորեն կապված է դասարանի որակական բնութագրից ❖ տարբեր դասարաններում միևնույն մեթոդը կիրառվում է տարբեր կերպ ❖ նորությունները ու փոփոխությունները շատ պահանջված են ներկայումս աշակերտության կողմից Ինչ վերաբերվում է հետազոտական աշխատանքի հարցի պատասխանին, ապա այստեղ նույնպես տարբեր կարծիքներ ստացանք, ինչը նորից կապում եմ դասարանների որոկական բնութագրերի հետ: Ինչպես արդեն նշել եմ, դասարանի աշակերտներին բաժանվեցին հարցաթերթիկներ, որտեղ նրանք պետք է 1-10 բալանոց սանդղակով գնահատեին մեթոդները: Ցուրաքանչյուր մեթոդ պետք է ստանար երկու գնահատական, այսինքն, պետք է գնահատվեր երկու տեսանկյունից՝ հետաքրքրության և արդյունավետության:

	Տասներորդ դասարանը թե՞ հետաքրքրության, թե՞ արդյունավետության ամենաբարձր բալերը տվել էր առցանց ուսուցման գործիքներին ***(Padlet, Kahoot!):*** Տասներկուերորդ դասարանում պատկերը մի փոքր այլ էր: Նորից հետաքրքրության ամենաբարձր բալերը տրվել էին առցանց ուսումնական գործիքներին, սակայն դասարանի գերիշխող մեծամասնությունը արդյունավետության ամենաբարձր բալերը տվել էր այն մեթոդներին, որոնց կիրառությունը սկզբնական շրջանում ամենաբարդն է եղել իրենց համար: Արդյունավետության առաջին տեղում էր Իրավիճակ մեթոդը, երկրորդ տեղում էր Քառաբաժանը, իսկ երրորդում՝ Ջամբյուղ մեթոդն էր:
Օգտագործված գրականության ցանկ	https://02stroy.ru/hy/komplektuyuschie-dlya-lestnic/k-aktivnym-i-interaktivnym-metodam-obucheniya-otnosyatsya.html https://yourenlang.ru/hy/ponyatie-i-sushchnost-metoda-priema-i-pravila-obucheniya-uspeh-obrazovatelnogo.html https://padlet.com/ https://kahoot.it/ https://hy.wikipedia.org/

Հավելված 1

Մտագրոհի մի օրինակ վերցված դասի պլանավորման իմ տետրից

12[դ] դասարան, թեմա՝ Globalization, Travel, Transport, Communication



Հավելված 2

Հարցաթերթիկի մեր օրինակը

Brainstorming		Grouping		T-chart		Quaters		Situation		Translation		Basket		Padlet		Kahoot!	
հետաքրքրություն	Արդյուն ավետություն																